

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Վերջին տարիները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար կարելի է նկատել զարթոնքի շրջան: Կրոնական զարթոնքը իր շոշափելի արդյունքներն է տալիս թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Խորհրդային Միության հայաշատ շրջաններում:

Խորհրդային Միության մեջ ծավալվող վերակառուցման շունչը իր բարերար ազդեցությունն է թողնում նաև եկեղեցական կյանքի վրա: Մշակվում է «Խղճի ազատության մասին» օրենքը, որով լայն հնարավորություններ են տրվում հավատացյալներին, և նրանց կրոնական համուզմունքները ապահովվում են սահմանադրական իրավունքներով:

Հայաստանի տարբեր շրջաններում մեծ խանդավառությամբ կազմակերպվում են կրոնական նոր համայնքներ: Վերաբացվում են եկեղեցիներ և պատմական վանքեր:

Վերջերս պատմական Սյունյաց աշխարհում, որն իր մեջ ընդգրկում է Հայաստանի հարավային շրջանները, վերաբացվեցին Տաթևի հռչակավոր վանքն ու Մեղրիի Ս. Աստվածածին եկեղեցին: Եղեգնաձորում վաղուց գործող Ս. Խաչ վանքի և Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցու հետ միասին Տաթևի վանքն ու Մեղրիի Ս. Աստվածածին եկեղեցին կազմեցին կրոնա-վարչական մեկ կառույց՝ վերածվելով ընդհանուր մեկ թեմի և կենտրոն ունենալով Տաթևի վանքը:

1989 թվականի ապրիլի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական ժողովը, որտեղ հաստատվեց Սյունյաց թեմի վարչական կառույցը:

Այսպիսով, Մայր Հայաստանում, Արարատյան Հայրապետական և Շիրակի թեմերի կողքին կյանքի կոչվեց Սյունյաց թեմը:

Պատմական Սյունյաց աշխարհին մաս կազմող 12 գավառներից Խորհրդային Հայաստանի մեջ են մտնում այսօրվա Եղեգնաձորի, Ագիզրեկովի, Սիսիանի, Գորիսի, Ղափանի և Մեղրիի շրջանները:

Սյունյաց Աթոռը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նշանավոր Աթոռներից է եղել: Նրա փառահեղ պատմությունը անհնարին էր մոռացության տալ, ուստի Ամենայն Հայոց կաթողիկոսը, վերակազմակերպելով, կյանքի կոչեց այդ պատմական թեմը և այն օժտեց եպիսկոպոսական Աթոռով, որին առաջնորդ կարգեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանին:

Հայոց Հայրապետը ընդառաջելով թեմական առաջնորդի, ինչպես նաև Սյունյաց աշխարհի ողջ հավատացյալների հրավերին, միշտ հարազատ մնալով իր հայրական մխիթարիչ ուժին, ուզեց անձամբ այցելել և իր օրհնությունները տանել իր հավատացյալ ժողովրդին՝ Սյունյաց աշխարհի հարազատ զավակներին:

Նորին Սրբության հայրապետական այցելությունը տեղի ունեցավ ապրիլի 26—27 օրերին: Այդ օրերին պաշտոնական այցելությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր գտնվում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն: Ամենայն Հայոց Հայրապետը Կիլիկյան Աթոռի գահակալին իր շքախմբով հրավիրեց միասին այցելել և աղոթել Սյունյաց աշխարհի պատմական վանքերում և եկեղեցիներում:

* * *

Ապրիլի 26-ին, առավոտյան ժամը 9-ին, Մայր տաճարի զանգերի քաղցրահնչյուն ղողանջների ներքո հայրապետական թափորը առաջնորդվում է դեպի Մայր տաճար: Թափորին մաս են կազմում Մայր Աթոռից՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին ընկերակցող Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը և Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ին ընկերակցում էին Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը, Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Տ. Սուրեն եպս. Քալթարոյանը, Տ. Բաբկեն աբդ. Չարյանը, Կիլիկյան կաթողիկոսության ազգային կենտրոնական վարչության անդամներ Տիարք Երվանդ Փամբուկյանը և Ոսկեբերան Արզումանյանը: Վեհափառին ուղեկցում էին նաև՝ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Տիար Ս. Վարդանյանը, տեղակալ Տիար Ռ. Զարգարյանը և «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Ծչորս Դավթյանը:

Մայր տաճարի Իջման ս. սեղանի առջև «Տէր, ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան» սաղմոսի ընթերցումից հետո Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսների թափորը մեքենաների շարասյունով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ուղղևորվում է Սյունյաց աշխարհ:

Շարասյունը անցնում է գարնանաշունչ և ամենուր ծաղկունքով լեցուն Արարատյան դաշտով՝ աստվածաշնչական Արարատ լեռան հայացքի ներքո:

Հոգևոր առաջին հանգրվանը տեղի է ունենում Եղեգնաձորի սահմանի մոտ, ուր տեղի իշխանությունների ներկայացուցիչները՝ գլխավորությամբ շրջանի ղեկավար Տիար Ս. Թարվերդյանի, մի խումբ հավատացյալների հետ դիմավորում և բարի գալուստ են մաղթում Հայոց Հայրապետին: Տեղի է ունենում ավանդական հացի և աղի օրհնություն: Հետո ճանապարհը շա-

րունակվում է մինչև Ամսաղուի Նորավանք: Միջնադարի նշանավոր այս վանքում բազմահազար հավատացյալներ մեծ խանդավառությամբ և երկյուղածությամբ, արցունքները աչքներին, բարդու ճյուղեր ու ծաղիկներ ձեռքներին, բարի գալստյան ցնծագին ողջույններ են հղում Հայոց Հայրապետին: Հուզված, բայց խորապես ուրախ Հայոց Հայրապետը տալիս է իր հայրապետական պատգամը: Այնուհետև կաթողիկոսներն ու շքախմբի անդամները ծանոթանում են Նորավանքի կառույցներին:

Հայկական ճարտարապետության այս նշանավոր կոթողը 13-րդ դարի սկզբին եղել է Սյունիքի հոգևոր կենտրոնը, Օրբելյան իշխանական տան տոհմական դամբարանը: Այստեղ են գործել միջնադարի նշանավոր ճարտարապետներ Սիրանեսն ու Մոմիկը: Գլխավոր եկեղեցին կրում է Ս. Կարապետ անունը. կառուցվել է 1216—1223-ին իշխան Լիպարիտ Օրբելյանի կողմից. ունի կից մի գավիթ, որը եղել է Օրբելյան տոհմի և վանքի առաջնորդների դամբարանը: Եկեղեցու հյուսիսային պատի երկայնքով ձգվում է Սմբատ իշխանի թաղածածկ դամբարանը՝ Ս. Գրիգորը: Հմայիչ է Բուրթել իշխանի երկհարկանի դամբարան-եկեղեցին՝ Ս. Աստվածածինը: Արևելյան կողմում պահպանվել են նաև առանձին շենքերի մնացորդներ և այլ շենքերի հիմնապատեր:

Ս. Կարապետ եկեղեցու գավթում Վեհափառ Հայրապետին դիմավորում է Եղեգնաձորից ժամանած երգչախումբը, որն իր կատարողական բարձր արվեստով հնչեցնում է սրբազան պատարագից մի քանի հատվածներ:

Վեհափառը օրհնում է երգեցիկ դասին, ինչպես նաև ներկա հավատացյալ ժողովրդին:

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի և Անթիլիասից ժամանած պատվիրակության Եղեգնաձորի տեղական իշխանությունների ներկայացուցիչները ճաշկերույթ են կազմակերպում կիրճի մեջ գտնվող գեղատեսիլ դաշտում: Բացօթյա ճաշկերույթն անցնում է ուրախ և խանդավառ մթնոլորտում: Տեղի է ունենում նվերների փոխանակում:

Հավարտ ճաշկերույթի Հայոց Հայրապետը Մեծի Տան Կիլիո կաթողիկոսի և շքախմբի անդամների հետ միասին ուղևորվում է Եղեգնաձորի քաղաքային հրապարակ, որտեղ համախմբվել էին շուրջ 15.000 հավատացյալներ: Հուզիչ էր Վեհափառի մուտքը հրապարակ: Իրենց համազգեստներով երկշարք-կանգնած երկսեռ դպրոցական աշակերտները ծաղիկների փնջեր էին նետում երկու Հայրապետների ոտքերի առջև, որոնք առաջին անգամ էին ընթանում Վայոց ձորի սրբազան հողի վրա: Թափորով երկու կաթողիկոսները առաջնորդվում են դեպի հրապարակի պուրակը, որտեղ կատարվում է ծառատնկման սրբազան արարողություն: Հայոց Հայրապետն ու Գարեգին Բ կաթողիկոսը ծիրանի տնկիներ են տնկում հրապարակի պուրակում:

Լեփ-լեցուն է հրապարակը. աշակերտներ, երիտասարդներ, տղամարդիկ և կանայք: Հուզված ու անհամբեր հավատացյալները ցնծության բացականչություններով Հայ Եկեղեցու գահակալներին առաջնորդում են հրապարակի կենտրոն, որտեղ Ամենայն Հայոց կաթողիկոսը տալիս է իր հայրապետական պատգամը.

ԱՂ ՈՒ ՀԱՑԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀՈՒՇԱՍՅԱՆ ԿՈՂՔԻՆ
27 ապրիլ 1989 թ.



Ս. ՏԱԹԵՎԻ ՏԱՃԱՐԻ ԾՐԱԳԱՓԱԿՈՒՄ



Ս. ՏԱԹԵՎԻ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ Է

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՇԱՐԺԱԿԱՆ ՍՅԱՆ ԱՌԱՋ

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ԵՂԵՌՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏՅԱՆ ՊԱՀ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԻ ՇՈՒՐՋ
24 ապրիլ, 1989

ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սիրեցյալ ժողովուրդ մեր,

Ես գալիս եմ Սուրբ Էջմիածնից՝ Ամենայն հայոց հայրապետության կենտրոնից և բերում եմ ձեզ բոլորիդ իմ հայրական ողջույնը և հայրապետական օրհնությունը: Եկել եմ այս անգամ ոչ մենակ, այլ իմ հոգևոր, հարազատ եղբոր հետ՝ կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիո, որ այսօր իր Աթոռը հաստատած է Լիբանանի մեջ, Անթիլիասում: Տարագիր Աթոռն է այս՝ Կիլիկյան Հայաստանից քշված, ցեղասպանության սև տարիների ընթացքում: Մենք եկել ենք երկուսով և մեր մյուս հոգևոր եղբայրներով: Եկել ենք ձեզ մոտ, ձեր չքնաղագեղ այս աշխարհը՝ այցելություն տալու ձեր պատմական հոգևոր կենտրոններին, վանքերին, եկեղեցիներին, որոնք մեծ համբավ ունեն հոգևոր, մշակութային և ազգային իմաստով: Իսկ հիմա եկանք ձեր այս քաղաքը՝ Եղեգնաձոր, և միասին ծառ տնկեցինք: Երկուսով հոգեկան անհուն մխիթարությունը ունեցանք ձեր կողքին լինելու և ձեր տնկած ծառերի կողքին երկու ծառ ևս ավելացնելու: Մեր բանաստեղծներից մեկը ցեղասպանության տարիներից հետո, քսանական թվականներին, երբ հայ ժողովուրդը ողբի, լացի և հուսահատության անդունդի եզրին էր հասած (համայն հայությունը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի նահատակաց հիշատակը ոգեկոչեց երկու օր առաջ, ապրիլի 24-ին), մի հայ նշանավոր բանաստեղծ մի քանի տող արձանագրեց թղթի վրա, բայց նրա արձանագրությունը մնաց անջնջելի նաև մեր հոգիներում: Նա գրեց. «Մեռելներուս իբրև խաչ ես այս ծառը տնկեցի»: Բանաստեղծի այս խոսքերը արտահայտում են այն մտածումը, թե մեր մեռելների, մեր նահատակների հիշատակը պահելու, սրբացնելու, պանծացնելու, ծաղկեցնելու ամենահզոր միջոցը ծառ տնկելն է, երկիրը շենացնելն է, մեր մայր Հայաստանը ծաղկեցնելն է: Ահա այդ զգացմունքով ես այսօր ծառ տնկեցի ձեր այս գեղեցիկ քաղաքի հողում և մաղթում եմ ու աղոթում, որ Աստված ձեր աշխարհը միշտ խաղաղ, ապահով պահի, պահպանի և մեծ կորով ու եռանդ պարգևի մեր բոլոր բանվորներին, բոլոր մտավորական ուժերին, երիտասարդության մանավանդ, որպեսզի նրանք շարունակեն իրենց հայրենաշեն աշխատանքը և էլ ավելի ծաղկեցնեն այս չնաշխարհիկ երկիրը: Ճիշտ է, մենք անցյալ տարի դժվար օրեր ապրեցինք, տագնապներով լեցուն, մանավանդ երկրաշարժը ուժեղ, ծանր հարված հասցրեց մեզ, բայց մենք նույն ժողովուրդն ենք ու չենք կարող հուսահատվել, չենք կարող տկարանալ, ընդհակառակը, այսպիսի շրջաններին, պատմությա՛ն ընթացքում էլ, հիմա՛ էլ հայ ազգը դառնում է մեկ սիրտ—մեկ հոգի, միասնական և մեկ բռունցք, որպեսզի իր բոլոր դժվարությունները հաղթահարի և հասնի իր ազնիվ իդեալների իրականացման:

Թող Աստված ձեզ օրհնի և օգնական մնա այժմ և միշտ և հավիտյան. ամեն:

Ես ցանկանում եմ, որ այժմ լսեք նաև օրհնության մի քանի խոսքեր Գարեգին Բ կաթողիկոսից:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՂԵԳՆԱՁՈՐՈՒՄ

Թանկագին, արյունակից եղբայրներ և քույրեր: Իմ հոգևոր, սրտակից ավագ եղբայր Վազգեն Ա կաթողիկոսն Ամենայն Հայոց ասաց իր սրտի խոսքը, որ իմ էլ սրտի խոսքն է: Այդ խոսքի մեջ ոչ մի տարբերություն գոյություն չունի և չի կարող ունենալ: Ինչպես նա ասաց, ես եկել եմ հեռավոր արտասահմանից, Հայաստանի սահմաններից դուրս ապրող հայության մեկ բնակավայրից՝ Լիբանան երկրից: Հայաստանյայց եկեղեցու սմբողջությանը մաս կազմող պատմական մեր Կիլիկյան Հայաստանի կաթողիկոսության ներկա սպասավորն եմ ես՝ կողքին կանգնած Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Այրարատյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Ես չորս ամսվա մեջ երկու անգամ Հայաստան եկա, ի Սուրբ Էջմիածին: Առաջին անգամ դեկտեմբերի 15-ին, Լենինականի այդ ահավոր աղետից հետո: Ավերակ էր Հայոց աշխարհում: Ցավ էր Հայոց սրտերում: Բայց ես այդ ավերակների միջից, այդ ցավի միջից տեսա մեր ժողովրդի անխորտակելի կամքը իր հայրենիքը վերաշինելու: Եվ այս անգամ եկել եմ իմ ձեռքը Վազգեն Վեհափառի և հայրենի պետության ձեռքերի մեջ դնելու և միասին աշխատելու: Այսօր մեր միջև սահման չկա, բաժանում, աշխարհագրական անջատում չկա:

Ես այնքան ուրախ եմ այսօր, որ գտնվում եմ Եղեգնաձորում, դեպի Տաթևի վանքը տանող հանապարհի վրա: Ես Հայաստանում չեմ ծնվել ձեզ նման, Հայաստանում չեմ մեծացել, բայց իմ մայրենի լեզուն իմ արյան մեջ եմ զգում, որովհետև առանց այդ լեզվի, առանց այդ հայրենիքի մենք աշխարհում նետված ծառի տերևներ ենք՝ չորանալու դատապարտված: Թող Աստված մեր արմատներին կյանք տա. այդ հողով ենք մենք հայ, լինի այստեղ, լինի արտասահմանում, լինի այս երկնքի տակ կամ որևէ այլ վայրում երկրագնդի վրա: Շատ եմ կարդացել պատմությունը Եղեգնաձորի, Վայոց ձորի: Այժմ գալիս եմ Նորավանքից, որ գոհար մի ստեղծագործություն է, հայի հոգու գոհար ստեղծագործություն: Քարերի վրա հայի հոգին է խոսում, խաչքարերի մեջ հայ մարդը իր հավատքն է պատմում: Այստեղ է, ձեզանից ոչ շատ հեռու, Գլաձորը: Գրքերի մեջից կարդացել եմ Եսայի Նչեցու, Ներսես Մոկացու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու մասին: Սրանք հսկաներ են, մեծ մտքեր, մեր ժողովրդի հոգուն կյանք տվող, գաղափար տվող, ազգության ամրացում տվող դեմքեր են: Հաղորդվեցեք նրանց հետ: Բայց գրքի մեջ կարդալը ուրիշ բան է, ժողովրդին տեսնելը՝ ուրիշ բան:

Ես փակում եմ իմ խոսքը միայն մի նախադասությամբ: Մենք հազարամյա պատմություն ունենք, հարուստ անցյալ: Նայեցեք ձեր շուրջը այս վանքերին, պալատներին, որոնք այդ անցյալի վկայություններն են, բայց մենք նաև ապագա ունենք և ոչ միայն անցյալ: Մենք ապրում ենք ոչ թե անցյալի համար, մենք անցյալից ուժ ենք առնում գալիքի համար, մեր ապագայի համար: Եվ, սիրելի երեխաներ, դպրոցականներ, գիտե՞ք ինձ այսօր ի՞նչ ուրախություն պարգևեցիք: Դուք Վեհափառի ասած կանաչ ծառն եք մեր ազգի մեջ, դուք մեր աչքն եք՝ բացված դեպի մեր ապագան: Այս սրտով ես իմ խոր շնորհակալությունն եմ հայանում մեր հայրենի պետական իշխանությանց, որոնք իրենց աչքի բիբի պես գուրգուրանքով պահում են մեր հայրենիքը: Ես Երևանում տեսա Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ տիար Ոսկանյանին, անցյալ անգամ տեսել էի մեր վարչապետին, այսօր էլ կրոնական գործերի նախարար պարոն Վարդանյանը ընկերակցում

է մեզ: Այսուհետ դում ունեմ պետական և կուսակցական պատասխանատու անձնավորություններ: Նրանց հոգին այս Հայի հետ է, այս ժողովրդի հետ է, այս ժողովրդի ապագայի համար է: Նրանց կոչումը և առաքելությունը այդ է: Մենք նրանց գնահատում ենք իրենց հայրենանվեր աշխատանքի համար: Նկեր, ուրեմն, ձեռ-ձեռքի տանք, հայրենիքը շենացնենք, որպեսզի աշխարհը տեսնի, որ հայը ոչ միայն եղել է, այլ որ է՛ և լինելո՛ց է»:

Այնուհետև ցնծության բացականչություններով ու ծափողջույններով Հայոց Հայրապետը և Գարեգին Բ կաթողիկոսը իրենց շքախմբերով դուրս եկան հրապարակից և ուղևորվեցին Սիսիան:

ԴԵՊԻ ՍԻՍԻԱՆ

Սիսիանի շրջանի սահմանամերձ գոտում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել շրջանի քաղաքային իշխանության ներկայացուցիչները՝ գլխավորությամբ շրջանի ղեկավար տիար Հ. Առաքելյանի, նաև մի խումբ հավատացյալներ: Նրանք բարի գալուստ են մաղթում մեծարգո հյուրերին: Տեղի է ունենում ավանդական աղ ու հացի օրհնություն: Այստեղ Վեհափառին և նրան ուղեկցող անձանց հրաժեշտ են տալիս Եղեգնաձորի քաղաքային իշխանության ներկայացուցիչները: Ճանապարհը շարունակվում է մինչև Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցի: Գեղեցիկ բարձունքի վրա կառուցված 7-րդ դարի հռիփսիմեատիպ տաճարի շուրջ համախմբվել էին շուրջ 15.000 հավատացյալներ, որոնք կարոտի մեծ խանդավառությամբ սպասում են Լուսավորչի 130-րդ գահակալին:

Եկեղեցու մուտքի առջև Սյունյաց թեմի հոգևոր դասը զույգ բուրվառների ճոճքով, «Հրաշափառի» գեղեցիկ երգակցությամբ տաճար է առաջնորդում Ամենայն Հայոց Հայրապետին և Գարեգին Բ կաթողիկոսին: Բեմի առջև, խուռներամ հավատացյալների մեջ Հայոց Հայրապետն ու Գարեգին Բ կաթողիկոսը ընթերցում են «Օրհնութիւնք Աստիճանաց» սաղմոսը, որից հետո բարձրանում են բեմ, որտեղից համայն հայության Հայրապետը տալիս է Իր հայրապետական պատգամը.

ՎԱՂԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՍԻՍԻԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի հավատացյալ ժողովուրդ մեր: Իմ կյանքի ամենաերջանիկ օրերից մեկն է, որ ապրում եմ այսօր՝ այցի գալով Սյունյաց աշխարհը և մանավանդ մուտք գործելով այս աղոթքի տունը՝ ս. տաճարը: Այս հավատքը մեր նախնիները մեզ ժառանգ թողեցին իբրև կյանքի ուղեցույց: Դա է մանավանդ մեր ազգի հպարտությունը: Մեր ժողովուրդը քրիստոնեությունը ընդունել է ո՛չ իբրև արտաքին զգեստ, այլ իբրև իր հոգու անբաժան մասը. քրիստոնեությունը շաղախվել է մեր ժողովրդի ազգային գիտակցությանը և ոգուն այն աստիճան, որ մենք դարերից ի վեր ապրել ենք, ապրում ենք և դեռ պիտի շարունակենք ապրել իբրև քրիստոնյա ժողովուրդ:

Ապա Վեհափառ Հայրապետը մեծ ոգևորությամբ նշում է այն պայքարը, որ մեր ժողովուրդը դարերով մղել է հանուն իր հավատքի և հայրենիքի:

«Մեր Եկեղեցին նույնպես դժվար կացություն ապրեց անձի պաշտամունքի շրջանին,—շարունակում է Վեհափառը։—Բայց, փառք Աստուծո, այդ բոլորը անցան. և այս վերջին տարիներին մանավանդ, այս վերակառուցման, վերանորոգման և վերածննդի սարիներին մեր Եկեղեցու առջև լայն ճանապարհ բացվեց, որպեսզի իր առաքելությունը կարողանա շարունակել։ Մենք նոր լուսաբացի ճանապարհի առաջ ենք գտնվում և՛ եկեղեցական իմաստով, և՛ ազգային զարգացման, և՛ առաջադիմության»։

Վեհափառ Հայրապետն այնուհետև անդրադարձավ երկրաշարժի հետևանքներին, հանրապետությունում տիրող ծանր վիճակին և կոչ արեց ուժերը համախմբել համազգային միասնությամբ՝ պատվով դուրս գալու համար տարերային աղետի պարտադրած իրավիճակից։

Իր խոսքի վերջում Նորին Սրբությունն անդրադարձավ Սյունյաց չընքնաղ աշխարհի գեղեցկությանը և պատգամեց հավատարիմ մնալ հայրենի հողին և ազգային ավանդություններին։

Ապա Ամենայն Հայոց Հայրապետը հրավիրեց Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսին՝ նույնպես տալու իր օրհնությունը։

Գարեգին Բ կաթողիկոսը, դիմելով հավատացյալ բազմությանը, ասաց.

«Առաջին անգամ Վայոց ձորի, Սյունյաց աշխարհի, Զանգեզուրի մեր հայաշունչ աշխարհն ենք գալիս երկու կաթողիկոսներով՝ նույն օրհնությունը, նույն սերը, նույն հավատքը բաշխելու ձեզ բոլորիդ։

Ինչ որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն ասաց, ես էլ ստորագրում և այդ պատմական թուղթը հանձնում եմ այսօր ձեր բոլորի սրտերին։

Ջուշանանք, միշտ արթուն մնանք։ Մեր պատմության մի ուրիշ տարբերակն էլ այն է, որ մի ուրիշ ցեղ էլ գտնվեց, որ կարծեմ Աստված չէր ստեղծել, չգիտեմ որտեղից ծագեց այդ ցեղը, որին Աստված հող չէր տվել, բայց նա մեր հողը գրավեց, ամբողջ Արևմտահայաստանը ամայացրեց իր բնիկ ժողովրդից, մեկուկես միլիոն հայեր ջարդվեցին, բայց մենք վերապրեցինք»։

Ապա Գարեգին Բ կաթողիկոսը անդրադարձավ Սյունյաց աշխարհի պատմության մի քանի կարևոր անցքերին, հայ ժողովրդի պատմության մեջ հավատքի դերին և հետևյալ հորդորն ուղղեց ներկաներին.

«Կառչեցեք այս հողին, այս սուրբ հողին. հերոսներ են ծնվել այս հողից. իմ ծնողները վտարվեցին հենց հայրենի երկրից։ Իմ հայրն ու մայրը գաղթի միջից են անցել, անապատի ավազներից են անցել, բայց մեզ թողել են այս լեզուն, թողել են սիրտ, թողել են Քրիստոսի հավատքը և Սուրբ Մեսրոպի գիրը։

Ապրեցեք այնպես, որ պատիվ բերեք մեր ազգին»։

Ապա Նորին Սրբությունը մաղթեց, որ Սիսիան քաղաքն աճի, հոգով զորանա, ամրանա, շրջակա ժայռերի պես ամուր մնա, հողերի պես բարեբեր դառնա, և այսպիսի փառահեղ տաճար կանգնեցնող մեր հայրերի հավատքը հավիտյան կենդանի մնա. «Հողին կյանք տաք և հողից կյանք առնեք, որ Աստծուն ասեք. «Աստված, Հայր մեր, դու քար տվիր մեզ, մենք

տաճար տվինք ձեզ, դու քար տվիր մեզ, մենք խաչքար տվինք ձեզ, դու հող տվիր մեզ, մենք պարտեզ տվինք քեզ: Ամեն»:

Հսկվարտ արարողության Սիսիան քաղաքի ղեկավար անձանց առաջնորդությամբ երկու Հայրապետներն իրենց շքախմբերով առաջնորդվում են հանգստի վայր: Մեկժամյա հանգստից հետո Վազգեն Ա կաթողիկոսը Գարեգին Բ կաթողիկոսի և նրա շքախմբի մյուս անդամների հետ միասին այցելում է Շաքիի ջրվեժը՝ մի պահ հրապուրվելու Որոտանի բնական հրաշքով, բնության անկրկնելի գեղեցկությամբ: Ըստ ավանդության, ջրվեժը կրում է անունը այն սևաչյա ու երկարավարս հայուհու, որը գերադասեց քարուժայռերից իրեն կիրճը նետել, քան ենթարկվել Լենկ Թեմուրին հարս տանելու մտադրությամբ իրեն հետապնդող արյունռուշտ զինվորների դժնի կամքին: Ջուրը ցած է հոսում 18 մետր բարձրությունից և կիրճում ստեղծվում է հրաշապատկեր, անզուգական մի գեղեցկություն:

Երեկոյան ժամը 19-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի և Անթիլիասից ժամանած պատվիրակության, շրջանի ղեկավար անձինք տալիս են պաշտոնական ճաշկերույթ: Ճաշկերույթն անցնում է ջերմ մթնոլորտում:

Բաժակաճառով հանդես է գալիս Սիսիանի շրջանի առաջին քարտուղար Հենզել Առաքելյանը, որը ողջունում է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի օրհնաբեր այցը Սիսական աշխարհ և բարի գալուստ մաղթում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ին, ինչպես նաև շքախմբի բոլոր անդամներին՝ նշելով. «Այսօրվա այցը սովորական այց չէ, այսօրվա այցը պատմական է, որ կարծում եմ ընդմիշտ կգրվի Սյունյաց աշխարհի տարեգրության մեջ: Վեհափառ Տեր, ուզում եմ ավելացնել, որ մեր ժողովուրդը Ձեզ շատ է սիրում, որովհետև Դուք միշտ եղել եք մեր ժողովրդի ազգային ազնիվ իղձերի արտահայտիչը»:

Ապա Իր հայրապետական օրհնությունն է բաշխում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ ասելով.

«Զգացված եմ այս արտակարգ ջերմ ընդունելության համար, որ պարտավորեցնող էր: Շնորհակալություն գնահատանքի խոսքերի համար»:

Ապա Նորին Սրբությունն անդրադառնում է իր անցյալին՝ նշելով այն պայմանները, որոնց մեջ նա ընդունել է իր եկեղեցական կարգը, հիշատակում է իր մի շարք այցելությունները Հայաստան և սրբալույս մյուռոնով իր օծումը որպես Ամենայն Հայոց կաթողիկոս՝ մատնանշելով, որ, իբրև եկեղեցական, իր առաքելությունը իրագործվել է Հայրենիքի հետ շփումով, Էջմիածնի Մայր տաճարի կամարների տակ՝ համոզված, որ եկեղեցական ասպարեզում կարող է ավելի օգտակար դառնալ իր ժողովրդին:

Նորին Սրբությունն իր խոսքն ավարտում է այսպես.

«Այդ գիտակցությունն է, որ ինձ մղեց աշխատանքի: Եվ եթե իմ սովորական կարողություններից մի քիչ վեր բարձրացա, այդ ոչ թե իմ շնորհն էր, այլ այն ոգին, որ ինձ ներշնչվեց Էջմիածնի սուրբ քարերից, անշուշտ նաև այն նպաստավոր պայմանները, որոնց մեջ ապրեցի: Ես բախտավոր կաթողիկոս եղա, որովհետև մեր պետական իշխանության կողմից, կարող եմ ասել հենց սկզբից, բարյացակամ վերաբերմունքի եմ հանդիպել: Այս այցելությամբ ես համոզվեցի, որ, թեև երեսուն տարուց ավելի է, ինչ Հայաստանում եմ, դեռ ամբողջապես չեմ ճանաչել Հայաստանը: Այս այցե-

լությամբ ոչ միայն ավելի ճանաչեցի մեր հայրենիքը, մեր ժողովրդին, այլ ավելի ճանաչեցի նաև ես ինքս ինձ, իբրև հայ: Առավել հասկացա այս ժայռակերտ աշխարհի մեջ ժայռակերտ հոգին մեր ազգի, որ անբաժանելի է այս բնակավայրից, այս հողից, այս սրբություններից:

Ահա այս զգացումներով ես կցանկանայի բաժակ բարձրացնել ժայռակերտ հոգի ունեցող մեր ազգի կենացը: Կեցցե՛ հայ ժողովուրդը»:

Ապրիլի 27-ին, առավոտյան ժամը 10-ին, նախաճաշից հետո, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելում է շրջկենտրոնից երեք կիլոմետր հեռու գտնվող մեր թվագրությունից առաջ 2-րդ հազարամյակի մեգալիթյան դարաշրջանի կառույցը: Վեհափառ Հայրապետն ուշադրությամբ դիտում է հզոր քարերը, որոնք հետաքրքրական վկաներն են անցյալի պատմության:

Ժամը 10.30-ին մեքենաների շարասյունը ուղևորվում է Գորիս:

Գորիսի շրջանի սահմանամերձ գոտում Վեհափառ Հայրապետին դիմավորության էին եկել շրջանի քաղաքային ներկայացուցիչները՝ գլխավորությամբ տիար Ռ. Ալեքսանյանի, ինչպես նաև հավատացյալների խումբը: Բարի գալստյան մաղթանքներից հետո տեղի է ունենում ավանդական հացի և աղի օրհնություն: Ապա Վեհափառին հրաժեշտ են տալիս Սիսիանի ղեկավար անձինք: Այնուհետև ճանապարհը գեղատեսիլ վայրերով շարունակվում է մինչև Տաթև: Ճանապարհներին փռված գյուղերում, լեռների լանջերին, ամենուր կանգնած են հավատացյալների հոծ բազմություններ: Դպրոցական աշակերտներ, ծաղիկների ու ճյուղերի ճոճքով, ցնծագին ողջույններով և խանդավառությամբ բարի գալստյան խոսքեր են ուղղում Ամենայն Հայոց կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսին և շքախմբի մյուս անդամներին:

Տաթևի ձորում, Սատանայի կամրջի մոտ, հանքային բնական ջրերի ափին, մի պահ մեքենաների շարասյունը կանգ է առնում. դուրս է գալիս Հայրապետը և հրապուրվում բնության զարմանահրաշ անձեռակերտ գեղեցկություններով, ապա հայացքն ուղղում դեպի բարձունքը, որտեղ ժայռի վրա վեր է խոյացել Տաթևի հռչակավոր վանքը, կապույտ երկնքի ու ժայռերի սահմանագծում, որպես քարեղեն բուրվառ: Ոլորապտույտ գեղեցիկ ճանապարհով ավտոմեքենաներն սկսում են բարձրանալ: Ներքևում Տաթևի ձորն է՝ գեղեցիկ ու հմայիչ: Գարնան զմրուխտի ու ծաղիկների գույնզգույն խաղը արևի հորդառատ շողերի տակ հյուսում է մի չքնաղ մանրանկար, հար և նման Տաթևի դպրոցի ձեռակերտ մանրանկարներին: Ճանապարհին կրկին կանգ են առնում մեքենաները: Դուրս են գալիս կաթողիկոսները և մոտենում համախմբված հավատացյալներին, որոնք շրջապատել էին Խրիմյան Հայրիկի՝ 1903 թ. Տաթևի վանք այցելության հիշատակին կանգնեցված հուշասյունը: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն սրբազան Աջը դնելով հուշասյունին, տալիս է իր հայրապետական պատգամը՝ վեր հանելով Խրիմյան Հայրիկի դյուցազնական ոգու վեհությունը:

Այստեղ խոսք է առնում նաև Գարեգին Բ կաթողիկոսը և բարձր գնահատում Վազգեն Ա-ի, որպես հայ ժողովրդի վերածննդի մեծ Հայրապետի, գործունեությունը:

Ուխտագնացությունը շարունակվում է:

Քիչ անց ավտոմեքենաները հասնում են Տաթևի վանքի գլխավոր դարպասին: Դարպասի մոտ հավաքված հազարավոր հավատացյալներ ցնծու-

թյամբ են ողջունում ժամանումը երկու Հայրապետների: Այստեղ Ամենայն Հայոց Հայրապետին և Գարեգին Բ կաթողիկոսին բարի գալուստ է մաղթում Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը: Սյունյաց թեմի հոգևոր դասը զույգ բուրվառների ճոճքով և «Հրաշափառով» երկու կաթողիկոսներին առաջնորդում է Տաթևի Ս. Պողոս-Պետրոս Մայր տաճար:

Բեմի առջև Վեհափառ Հայրապետները սկսում են կարդալ «Օրհնութիւնք Աստիճանաց» սաղմոսը, որից հետո բարձրանում են բեմ:

Հանուն Սյունյաց թեմի հավատացյալների, ողջույնի հուզիչ խոսքով հանդես է գալիս Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը:

«Սիրելի հավատացյալ ժողովուրդ Սյունյաց աշխարհի,

Այսօր ցնծության մեջ է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին. Սյունյաց նորաբաց թեմին այցելություն է տալիս Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Առաջինը՝ իր կողքին ունենալով իր կրտսեր եղբայր՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ին: Տաթևի այս սրբազան տաճարը, որպես մի սկիհ բարձրացած դեպի երկինք, դարերով ընդունել է Սուրբ Հոգու կենարար շնորհները և բաշխել իր հավատավոր զավակներին: Այն օրից, երբ Հիսուսի Ավետարանի ծաղիկը բացվեց և իր բույրն այրձակեց այս սրբազան հողում, քրիստոնեական հավատքը շաղախվեց հայոց սրբազան հողի կենսունակ ակունքներին, և այդ հավատախառնումից մեր լեռներն ի վեր բարձրացան մեր տաճարներն ու խաչքարերը: Մեր սրբազան աղոթարանների շարքում իր հատուկ տեղն ունի Տաթևի գերապանծ Աթոռը՝ որպես պաշտպան հայ ուղղափառ դավանության և որպես վարդապետանոց-սանդարան հայ մտքի և ոգեկանության: Ահա այս սրբարանին ուխտի է եկել այսօր Հայոց մեծ Հայրապետը: Եկել է ձեզ հետ մեկտեղ աղոթելու Ս. Գրիգոր Տաթևացու շիրմի առջև:

Ամենայն Հայոց կաթողիկոսը անցնող վերջին երկու տարիների ընթացքում վերստին կյանքի կոչեց Սյունյաց պատմական թեմը, որի կենտրոնն է հանդիսանում Տաթևի վանքը, թեմը օժտեց եպիսկոպոսական Աթոռով և իմ համեստ անձը առաջնորդ կարգեց ձեզ համար, սիրելի հավատացյալներ: Նոր ոգևորությամբ համակված՝ Նորին Սրբությունը մեծ ուշադրություն է դարձնում Սյունյաց աշխարհի այս շրջաններին, որովհետև քաջ գիտակցում է մեր երկրի հարավային մասի աշխարհագրական դիրքը: Լինելով նվիրյալ կաթողիկոս Ամենայն Հայոց, առաքելական ջահն ստանալով իր նախորդներից, մեր մեծ Հայրապետը շարունակում է բորբոքել հայ հավատքի հուրը թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ ալիյուռքում: Այսօր նա ձեզ հետ է: Ուխտի է եկել՝ ձեզ հետ աղոթելու:

Ո՛վ Հայրապետ Ամենայն Հայոց, տվե՛ք Ձեր հայրապետական առաքելաշունչ պատգամը, օրհնեցե՛ք Սյունյաց աշխարհի սրբազան հողը և այդ հողին նվիրյալ հավատավոր այս հոգիները: Ամեն»:

Ապա իր հայրապետական պատգամն է ավանդում Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսը.

«Փառք քեզ Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

Այս մաղթանքն է բխում իմ սրտից այս նվիրական պահին, երբ, առա-

ջին անգամ լինելով իմ կյանքում, այցելում եմ այս նշանավոր աղոթքի տունը՝ Տաթևի վանքը, որի հռչակը պատմության ընթացքում մեծ նշանակություն է ունեցել և ունի ոչ միայն մեր ազգի, այլև համայն քրիստոնյա աշխարհի համար»:

Այնուհետև Նորին Սրբությունը հակիրճ պատմական ակնարկով նկարագրում է քրիստոնեության մուտքը Հայաստան և մանավանդ պետական կրոն դառնալը 301 թվականին՝ նշելով.

«2001 թվականին, երրորդ հազարամյակի լուսաբացին, Հայ Եկեղեցին, քրիստոնյա հայ ժողովուրդը պիտի տոնի Ս. Էջմիածնի կառուցման և Հայաստանի քրիստոնեացման 1700-ամյակը: Ահավասիկ, սիրելի ժողովուրդ, այս հին պատմությունը այսօր ուզեցի ձեզ ներկայացնել, որպեսզի ավելի ուժգին կերպով զգաք այս տաճարի խորհուրդը: Սա սովորական շինություն չէ: Այս քարերը սովորական քարեր չեն, հոգի են, ոգի են, ոգեղինացած շինություն են, որոնք խորհրդանշում են մեր քրիստոնեական հավատքը, որի համար մենք հպարտ ենք: Այսօր ես այստեղ եկա չափազանց հուզված և զգացված: Երկու զգացումներ կան իմ մեջ: Ես երեսուներեք տարիներից ի վեր կաթողիկոս եմ և մինչև հիմա չեմ եղել Տաթևի վանքում: Գալիս եմ ուշացումով: Գուցե լավ եղավ, որպեսզի Ամենայն Հայոց կաթողիկոսը և Տանն Կիլիկիո կաթողիկոսը ընդունվեն այսպես՝ համաժողովրդական ցնծությամբ և մեր պետական իշխանությանց առաջնորդությամբ:

Այս բոլորը մենք պարտական ենք վերջին տարիներին վերակառուցման հետևանքով տեղի ունեցած փոփոխություններին կյանքի բոլոր ասպարեզներում, նաև եկեղեցական-կրոնական ասպարեզում: Նոր ճանապարհ է բացվում մեր Եկեղեցու առաջ, և այդ ճանապարհով ավելի ազատ և ավելի համարձակ առաջ պիտի ընթանանք՝ շրջապատված ձեզնով, մեր ողջ ժողովրդով, որպես ճշմարիտ և հարազատ հետնորդները Սուրբ Գրիգոր Լուսավորչի: Մանավանդ այս վերջին ամիսներին բազում հայկական նոր վանքեր և եկեղեցիներ բացում են իրենց դռները, վերանորոգություններ են սկսվում մեր պետական իշխանությանց օժանդակությամբ և քաջալերանքով ոչ միայն Հայաստանում, այլ նաև Խորհրդային Միության մյուս հանրապետություններում: Ռուսաստանում բացվեց Լենինգրադի հայոց եկեղեցին, հավանաբար շուտով մի եկեղեցի բացվի Ռիգայում, հույս ունենք նաև Վրաստանում բացել նոր եկեղեցիներ: Ուզում եմ այստեղ կարևորությամբ ձեզ հաղորդել, որ Լեռնային Ղարաբաղում՝ մեր հայկական Արցախում, շուտով բացվելու են Գանձասարի և Ամարասի վանքերը, Հադրութի և Մարտակերտի եկեղեցիները, թերևս մոտ ապագայում մի եկեղեցի ունենանք նաև Ստեփանակերտում: Ղարաբաղում արդեն սկսվել են որոշ վերաշինական աշխատանքներ: Մենք նշանակել ենք այնտեղ մի եպիսկոպոս և 5—6 վարդապետներ, որոնք շուտով գնալու են Ղարաբաղի ժողովրդին հոգեկան մխիթարություն բաշխելու: Եվ ինչպես դուք այստեղ, այնտեղ էլ ձեր քուրերը և եղբայրները, նույն հավատքով տոգորված, նույն ոգևորությամբ, նույն ազգային խանդավառությամբ շրջապատում են մեր հոգևորականներին, որպեսզի կարճ ժամանակի ընթացքում ամբողջապես վերաշինեն այնտեղի վանքերը և եկեղեցիները, և հայ ժողովուրդը իր բնական կյանքի ճանապարհի մեջ մտնե նաև կրոնական-եկեղեցական իմաստով:

Այս քարերի մեջ ինչ-որ խորհրդավոր մի զորություն կա: Հայկական դասական հին ճարտարապետությունը ես զգում եմ հիմա այստեղ ավելի, քան ուրիշ տեղ: Այդ ճարտարապետությունը կարծես շարունակությունն է այս լեռնաշխարհի բնության: Ոգեղինացած լեռներն են, որ այս կերպարանքով շարունակում-են դեպի երկինք բարձրացնել իրենց կատարները:

Սիրելի ժողովուրդ, ես չափազանց գոհ եմ, որ այսքան մեծ թվով եկել եք այստեղ և մեծ մասամբ երիտասարդներ եք: Շատ լավ է: Ձեզանով կվերանորոգվի հայ ժողովուրդը հոգեպես, և կվերածաղկեն Հայ Եկեղեցին ու հայ ոգեկանությունը մեր Հայաստան աշխարհում:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ. ամէն»:

Հավատացյալ ժողովուրդին ուղղված հետևյալ սրտառուչ խոսքով հանդես եկավ նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը.

«Սիրեցյալ եղբայր՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա կաթողիկոս, սիրելի հոգևոր եղբայրներ և թանկագին հավատակից, արյունակից, անվանակից և ճակատագրակից եղբայրներ և քույրեր: Ես գալիս եմ արտասահմանից: Ես չեմ ծնվել Հայաստանում: Ես Կիլիկիան չեմ կարողացել տեսնել, որովհետև թշնամին հայությունը դուրս մղեց Արևմտահայաստանից ու Կիլիկիայից, և մենք աշխարհով մեկ ցրվեցինք: Բայց այսօր ես «Փառք քեզ, Աստված» եմ ասում, որ իմ հարազատ աշխարհի մեջ եմ և մանավանդ մեր հայրերի շնչով, քրտինքով և արյունով բարեբեր դարձած Սյունյաց աշխարհի մեջ»:

Գարեգին Բ կաթողիկոսն այնուհետև ուրախություն հայտնեց Սյունյաց թեմի վերահաստատման առթիվ, խոսեց հայեցի ոգու դաստիարակության գործում Հայաստանյայց Եկեղեցու ունեցած դերի մասին, ապա իր խոսքն ավարտեց՝ նշելով.

«Այսօր ես իմ շնորհակալությունը և գնահատությունն եմ հայտնում մեր հայրենի պետությանը, նրա ներկայացուցիչներին, որոնք իրենց աչքի բիբի պես խորին գուրգուրանքով են պահում այս տաճարները: Օրհնյալ լինեն ձեր ձեռքերը, աշխատավոր եղբայրներ: Դուք մուրճով քարին նոր կյանք եք տալիս և այս վանքը վերածաղկեցնում ...Այսօր հոգեկան կերպարանափոխության, պայծառակերպության, վերածննդյան օր պիտի լինի բոլորիս համար: Սիրելի երեխաներ, օրիորդներ, պատանիներ, Ամենայն Հայոց կաթողիկոսը Աստուծո խոսքն է բերում ձեզ, այդ խոսքը առեք հացի պես, ջրի պես և լցրեք ձեր հոգիները: Մարդը միայն միս ու ոսկոր չէ: Մարդը հոգի է, մարդը ազգ է, պատիվ ունի, ապրեցեք այդ պատվով, Քրիստոնեական հավատքով և ազգային ինքնագիտակցությամբ:

«Յաւել ի մեզ, Տէր Ամենակալ, զհաւատ, զյոյս, և զսէր. ամէն»:

Գորիսից ժամանած մանկավարժական ուսումնարանի սաները Մայր տաճարում կատարում են կրոնական և հայրենասիրական երգեր: Ապա Հայոց Հայրապետը իջնում է բեմից և թափորի ուղեկցությամբ առաջնորդվում տաճարի հարավային մասում գտնվող Ս. Գրիգոր Տաթևացի վարդապետի մատուռ-դամբարանը: Այստեղ Ամենայն Հայոց Հայրապետը և Գա-

ռեգին Բ կաթողիկոսը առանձնանում են և աղոթում, ապա երկյուղածությամբ խոնարհվում մեծ Սրբի աճյունի առջև: Այնուհետև երկու կաթողիկոսներն ու շքախմբի անդամները ծանոթանում են հոչակավոր վանքի կառույցներին:

Տաթևի Մայր տաճարը կառուցվել է 895—906 թվականներին: Տաճարին կից, հարավային կողմում, 1295 թ. Ստեփանոս Օրբելյանի կառուցած Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է: Վանքի հյուսիսային կողմում, բարձունքի վրա, վեր է խոյանում Ս. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 1087 թվին: Վանքը ամբողջությամբ պարսպապատ է. պարիսպների ներսում են տեղադրված միաբանական խուցերն ու օժանդակ շինությունները: Պարըսպից դուրս գտնվում են ձիթհանն ու համալսարանի շենքը: Դարերի ընթացքում Տաթևի վանքը բազմիցս ենթարկվել է օտար զավթիչների ասպատակություններին: Այն մեծ վնաս է կրել հատկապես երկրաշարժներից: 1931 թվականի երկրաշարժը գրեթե հիմնովին կործանում է վանքի կառույցները: 1971 թվականից սկսվել են վերականգնման աշխատանքները: Վանքը համարյա հիմնովին վերականգնվում է:

Տաթևի վանքից ավտոմեքենաների շարասյունը ուղևորվում է Գորիս: Քաղաքի մուտքից սկսած մինչև հրապարակը, ամենուր համախմբած են հավատացյալները և ոգևորությամբ ողջունում են Հայոց Հայրապետին: Միհիթար Սպարապետի անվան հրապարակում շուրջ 30.000 հավատացյալներ խանդավառ բացականչություններով դիմավորում են Հայ Եկեղեցու իշխանավորներին: Այստեղ Վեհափառ Հայրապետը ուրախության հուզմունքով տալիս է իր հայրական պատգամը:

Նորին Սրբությունը նախ խոսում է Ս. Էջմիածնի Մայր տաճարի հիմնադրության խորհրդի մասին, հատուկ կարևորությամբ ընդգծում շարականագրի «Էջ Միածինն ի հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա» արտահայտությունը և շարունակում «Իբրև ժողովուրդ, հայ ժողովուրդը կար քրիստոնյա լինելուց առաջ: Բայց հայ ժողովրդի ազգային ոգին, իբրև ազգություն, կազմակերպվեց հատկապես այդ ոգեկան լույսով: Այդ ոգեկան լույսով Ս. Մեսրոպ գտավ մեր այբուբենը և պարգևեց մեր ազգին: Այդ ոգու լույսով թարգմանվեց Ս. Գիրքը 5-րդ դարի սկզբին, և հիմքը դրվեց հայոց գրականության: Այդ նույն ոգեկան լույսով Ս. Վարդան Մամիկոնյան Ավարայրի դաշտում հերոսական կռիվ մղեց ընդդեմ զրադաշտական Պարսկաստանի, հանուն հավատքի և հայրենիքի ազատության: Այդ ոգու լույսով կազմավորվեց և պայծառակերպվեց հայ ժողովրդի հոգեկան աշխարհը, նրա բարոյական դիմագիծը, նկարագիրը: Այդ ոգեկան լույսով մեր ազգը ապրեց դարեր շարունակ, երբեմն շատ դժվարին պայմաններում, բայց միշտ հաղթական, վերագտավ իր կյանքը, իր կյանքի խաղաղությունը և մանավանդ կարողացավ իր ուժերը մեկտեղել և ստեղծել նոր կյանք, նոր վերածնունդ, նոր արշալույս: Այդպես եղավ նաև 1915-ից հետո: Մոտ երկու միլիոն նահատակներ զոհ գնացին օսմանյան բարբարոսության և նահատակվեցին անասելի տառապանքների մեջ: Հայ ժողովուրդը հասավ գրեթե հուսահատության անդունդի առաջ, բայց, այնուամենայնիվ, իր ոգին չկորցրեց, հավաքեց իր բոլոր ուժերը և Սարդարապատի փառավոր հաղթանակով ստեղծվեց իր նոր հայրենիքը, որ մինչև մեր օրերը շարունակում է իր վերելքը, առաջընթացը, ա՛յն հայրենիքը՝ այսօրվա Խորհրդային Հայաստանը, որի քաղաքացիներն եք դուք բոլորդ հպարտորեն:

Ապա Նորին Սրբությունը բաշխեց իր օրհնությունը հետևյալ խոսքերով.

«Իմ ողջույնը և իմ օրհնությունը ձեզ բոլորիդ: Մաղթում եմ ամենքիդ ուժ, եռանդ, կարողություն, բոլոր դժվարությունները հաղթահարելու կորով, որովհետև մեր հայրենիքը վերահաս սաստիկ երկրաշարժից հետո մեծ փորձության ենթարկվեց, և երևի տակավին մի քանի տարիներ ծանր վիճակ պետք է շարունակի տիրել մեր երկրում, հատկապես աղետալի շրջաններում: Բայց մենք նույն ժողովուրդն ենք, որ չգիտենք հուսահատվել, չգիտենք տկարանալ. ընդհակառակը, այս դժվար փորձության օրերին պետք է ամենքս՝ ժողովուրդ, պետական իշխանություն և սփյուռքի հայություն, դառնանք մեկ սիրտ, մեկ հոգի, մեկ նպատակ՝ հաղթահարելու համար ամեն դժվարություն, ստեղծելով մեր երկրում հետզհետե ավելի բարօր վիճակ, ավելի կարգապահ վիճակ: Ահա այս բաղձանքով, այս մաղթանքով ես դիմում եմ ձեզ և կրկին բաշխում Աստուծո օրհնությունը Ս. Էջմիածնից. ամեն»:

Ապա հավաքված հոծ բազմությանը դիմեց Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը՝ հետևյալ ոգեշունչ խոսքով.

«Սիրեցյալ և հավատարիմ հայրենակիցներ,

Կյանքիս երջանկագույն պահերից մեկն եմ ապրում այսօր: Այս երկօրյա այցելությունը Ամենայն Հայոց Հայրապետի՝ Վազգեն Ա կաթողիկոսի հետ, պատմական նշանակություն ունի ոչ միայն ձեզ համար, այլ նաև մեզ համար: Ուրախ եմ, որ այս հրապարակում համախմբված է մանավանդ նոր սերունդը, գալիք սերունդը: Մենք եղանք Եղեգնաձորում, եղանք Սիսիանում և այս առավոտ եղանք նաև Տաթևի վանքում: Մեր ամբողջ պատմությունը եկավ և ներշնչեց մեզ: Աստված երկիր է իջել և քարեղեն կերպ է ստացել Տաթևի վանքով: Դուք կենսունակ ոգով ժողովուրդ եք: Դուք մեր նոր կյանքի դրոշմն եք բերում հայությանը:

...Երբ վերադառնամ արտասահման, պիտի պատմեմ, թե Գորիսի մեջ, Սյունյաց աշխարհի մեջ մեր ժողովուրդը հողից կյանք է կերտում, Լենինականի վերքն է դարմանում նոր ծնունդներով, բազմանդամ երիտասարդությամբ՝ սպասելով վարդահեղեղ արշալույսին, որ մեր ապագան է լինելու:

Թող Աստուծո օրհնությունը լինի ձեզ վրա»:

Հանուն զանգեզուրցիների Վեհափառ Հայրապետին հանձնվեց հետևյալ հուշագիրը.

ՎԵՀԱՓԱՌ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ձեր այցելությունը Գորիսի շրջան անմոռաց է ու պատմական: Խրիմյան Հայրիկից հետո Ամենայն Հայոց կաթողիկոսը առաջին անգամ է Տաթևում:

Մեր լեռնաշխարհը, որտեղ չարյաց սերմը երբևէ բույն չի դրել, միշտ եղել է անսասան ու ամրակուռ՝ խորապես հավատացած հայ ժողովրդի պայծառ ապագային:

Վեհափառ Տեր, բացառիկ կարևոր է Ձեր խաղացած դերը բովանդակ հայության կյանքում, մեր ժողովրդի նորօրյա պատմության մեջ: Ցանկանում ենք Ձեզ երկար տարիների կյանք, ամուր առողջություն և իրականացում Ձեր բոլոր մտահղացումների՝ ի փառս մեր հնամենի, հերոսական ու տա-

ղանդավոր ժողովրդի: Ձեր սրբազան աջը թող հովանի լինի Հայոց աշխարհի և համասփյուռ հայության վրա:

Ձեզ նվիրում ենք մեր հինավուրց երկրամասի խորհրդավոր ու անկրկնելի բնության ու ճարտարապետական կոթողների պատկերները, մեր բովանդակ հոգու ջերմ սերը:

Զանգեզուրցիների բարի մաղթանքներն ընդ Ձեզ...

27 ապրիլի 1989 թ.
Ք. Գորիս

Այնուհետև երկու Հայրապետները իրենց շքախմբերով այցելում են հրապարակի վրա գտնվող «Ժամանակակից արվեստի թանգարանը» և ծանոթանում հայ կերպարվեստի վարպետների աշխատանքներին:

Ի պատիվ Հայ Եկեղեցու իշխանավորների, Գորիսի քաղաքային իշխանությունները կազմակերպում են ճաշկերույթ, որի ընթացքում բարիգալստյան ջերմ խոսքեր են արտասանվում և սրտագին մաղթանքներ արվում երկու Վեհափառներին: Այստեղ նույնպես իր պատգամն է բաշխում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԳՈՐԻՍՈՒՄ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ՊԱՀԻՆ

Նախ ես կուզեի իմ շնորհակալությունը հայտնել թամադային, որ կենաց առաջարկեց մեր Եկեղեցու, մեր հոգևորականներիս համար: Երկրորդը՝ իմ անկեղծ գոհունակությունը տեղի իշխանություններին, որոնք բացառիկ հանդիսավորությամբ կազմակերպեցին մեր այցը Գորիս: Երկուքս էլ չէինք սպասում, ճիշտն ասած: Այդպես սկսվեց Եղեգնաձորից և մինչև այստեղ: Այսօր մեր այցելությունը հասնում է իր ավարտին: Զգիտեմ, կըրկին անգամ պիտի կարողանամ գալ, համենայնդեպս ցանկանում եմ գալ, որովհետև իսկապես հիասքանչ աշխարհ է այս շրջանը: Բնականաբար շատ բան գիտեի Զանգեզուրի և Սյունյաց աշխարհի մասին, բայց ուրիշ բան է կարդալ, ուրիշ բան է լսել ուրիշներից կամ նկարներից: Բոլորովին այլ տպավորություններ կրեցինք և ուժեղ կերպով ազդվեցինք, ոչ միայն պարզապես աչքի հրապուրելի տեսարաններով, այլ հոգեպես ցնցվեցինք: Այժմ մենք իրական, ամբողջական Հայաստանը ճանաչեցինք: Ուրեմն շնորհակալ ենք ձեր այսպիսի հանդիսավոր ընդունելությունների համար: Մեր կյանքում անջնջելի հիշատակներ պիտի մնան դրանք և մենք պիտի վերադառնանք ավելի լավատես և ավելի ոգեշնչված, մեր Եկեղեցու ապագա առաքելության առնչությամբ:

Եկեղեցում անտարակույս վերջին տարիների բարեփոխումներին Խորհրդային Միության մեջ, այն, ինչ արտահայտվում է «պերեստրոյկա», «դեմոկրատիզացիա» գաղափարներով դրանք զգում ենք մենք բոլորս, որ լոկ խոսքեր չեն, այլ հսկայական ճիգեր, որպեսզի այս երկիրը վերագտնե իր ճշմարիտ վերակառուցման ճանապարհը թե տնտեսական գետնի վրա, թե մշակութային, կրթական ու գիտական, այդ թվում նաև կրոնական կյանքի մակարդակի վրա: Նորեն բազմաթիվ նոր եկեղեցիներ բացվեցին Հայաստանում, և Արցախում, Ռուսաստանում: Նաև հիմնական մի միջոցառման ձեռնարկեց մեր պետությունը, այն է օժտել Խորհրդային Միու-

թյունը մի օրենքով, որ վերաբերում է խղճի ազատության, այսինքն կրոնի ազատության:

Պետք է ասեմ, որ մեզ մոտ Եկեղեցական կյանքը, պատերազմից հետո, հատկապես վերջին երեսուն տարիներին, իմ շրջանին, բավական բնականոն հունի մեջ մտավ: Ես միշտ վայելեցի բարյացակամ վերաբերմունք, զգացի մեր հայրենի պետության ցանկությունը, որ Հայաստանյայց Եկեղեցին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, հետզհետե առավել վերաշինեն և զորանան: Բայց մեկ բան պակաս էր իրավական տեսակետից: Հիմա, նոր օրենքով, որ պիտի հրչակվի քիչ ժամանակ հետո, Եկեղեցին ստանում է իրավական անձի իրավունք, Խորհրդային օրենսդրություն կառույցին մեջ: Սա բոլորովին նորություն է մեր երկրում, և հիմնական, շատ կարևոր նորություն: Սա, պարզապես բարյացակամ վերաբերմունք չէ, այլ օրինական վերաբերմունք մը դեպի կրոնական հաստատությունները, դեպի Եկեղեցին: Այսպիսով, ահավասիկ, լայն հեռանկար բացվում է օրինավորապես եկեղեցու առաջ:

Այդ օրենքի նախագիծը Մոսկվայից ուղարկված է նաև մեզ՝ Էջմիածին, որպիզի ծանոթանանք և գուցե մեր դիտողությունները կամ առաջարկությունները ներկայացնենք:

Այս բոլորը խոսում են այն մասին, որ մեր երկրում կատարվող վերափոխումները, հիմնական վերափոխումներ են, նույնիսկ ասվում է, որ հեղափոխության մեջ հեղափոխություն է: Մանավանդ մեր փոքրիկ ժողովուրդը առավել շահագրգռված է իմ կարծիքով, որ իրապես հաջողվի և հաղթանակի, այն, ինչ բնորոշվում է վերակառուցում ասելու, պետք է հոգով-սրտով ցանկանք, որ անպայման հաջողվի այդ, հայաստանցի ժողովրդի համար կենաց-մահու հարց է:

Այս մտորումներով կրկին իմ շնորհակալությունն եմ հայտնում և բարձրացնում եմ իմ բաժակը մեր ժողովրդի և մեր վերածնված Խորհրդային Հայաստանի կենացը:

Ապա շնորհակալության խոսք է ասում Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը, որից հետո տեղի է ունենում նվերների փոխանակում:

Ճաշկերույթն անցնում է խանդավառ մթնոլորտում:

Հավարտ ճաշկերույթի երկու Հայրապետները իրենց շքախմբի անդամներով Գորիսից վերադառնում են Մայր Աթոռ Ս. Էջմիածին անմոռանալի տպավորություններով:

ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ